

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

____.____. 2019 թվականի

N ____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ
2-Ի N 859-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի
34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի
«Հայաստանի Հանրապետությունում 2018/2019 ուսումնական տարվա պետության
կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ
(անվճար), առկա ուսուցմամբ՝ ինտերնատուրայի և կլինիկական օրդինատուրայի
ընդունելության տեղերը հաստատելու մասին» N 859-Ն որոշման 1-ին կետի 1-ին
ենթակետում «<28>> թիվը փոխարինել «<63>> թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող
օրվանից:

Ա. Հարությունյան

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հիմնավորումը

1. Անհրաժեշտությունը.

ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 859-Ն որոշման մեջ փոփոխությունը պայամանվորված է շահագրգիռ կողմի ներկայացվող պահանջներից: Առաջարկվող փոփոխության միջոցով նախատեսվում է կարգավորել ինտերնատուրայի միջոցով կադրերի պատրաստման անհրաժեշտությունը և բժիշկ-սպաների պահանջարկի ապահովումը:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

2017/2018 ուսումնական տարում Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի տարբեր ֆակուլտետներ ավարտած 35 ուսանողներ, որոնք ենթակա են շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի և որպես շարքային կազմ զորակոչվելը շրջանավարտների մոտ առաջ էր բերել դժգոհություն, ինչի առնչությամբ նրանք դիմել են ՀՀ վարչապետին, Պաշտպանության նախարարություն, ինչպես նաև Կրթության և գիտության նախարարություն:

Խնդրի առնչությամբ կատարված քննարկումների արդյունքում՝ հաշվի առնելով ստացած մասնագիտությունը, առողջապահական համակարգի և ՀՀ զինված ուժերում ներկայիս և ակնկալվող կադրային պահանջարկը, շրջանավարտներին առաջարկվել է 2019 թվականի ձմեռային զորակոչի շրջանակներում (հունվարին) շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելուց անմիջապես հետո Պաշտպանության նախարարության հետ կնքել Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ինտերնատուրայում մեկ տարի ժամկետով ուսումնառության վերաբերյալ քաղաքացիաիրավական պայմանագիր և ուսումն ավարտելուց հետո ծառայության անցնել որպես բժիշկ-սպաներ:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

Պաշտպանության նախարարությունից ստացված հայտի հիման վրա Կրթության և գիտության նախարարությունը ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ առկա ուսուցմամբ լրացուցիչ 35 ինտերնատուրայի ընդունելության տեղեր:

4. Կարգավորման նպատակը և բնույթը.

Առաջարկվող փոփոխության նպատակն է Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ինտերնատուրայում հատկացնել ուսումնառության 35 տեղ՝ ԵՊԲՀ-ի շրջանավարտների մեկամյա հետբուհական կրթությունն ապահովելու համար: Նման մոտեցումը հնարավորություն է ընձեռում աստիճանաբար շարունակական կրթությունը և համալրել ՀՀ զինված ուժերում առկա բժիշկ-սպաների կադրային պահանջարկը:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Պաշտպանության նախարարություն և Կրթության և գիտության նախարարություն:

6. Ակնկալվող արդյունքը.

Որոշման ընդունումը նախատեսում է կարգավորել ՀՀ զինված ուժերում առկա բժշկական կազմի թերհամալրվածության խնդիրը և ապահովել ինտերնատուրայում նրանց ուսուցումը շարունակելու հնարավորությունը:

Տեղեկանք

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 859-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման բյուջեների վրա ազդեցության մասին

Որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում:

Տեղեկանք

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 859-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մասին ընդունման առնչությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի հակասում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի
N 859-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>>**

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
<p>Պաշտպանության նախարարություն</p> <p>նոյեմբերի 27-ի թիվ ՊՆ/510-18 գրություն</p>	<p>«ՀՀ կառավարության ապրիլի 12-ի «Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին» N 430-Ն որոշմամբ (այսուհետ՝ Պատիվ ունեմ) սահմանված տեղերը ամբողջությամբ համալրված չեն՝ առաջարկում եմ «Պատիվ ունեմ» ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների առկայության դեպքում համապատասխան անհրաժեշտ գումարը փոխանցել ՀՀ պաշտպանության նախարարության համար նախատեսված ինտերնատուրայի ընդունելության անվճար տեղերին:</p>	<p>Առաջարկը ընդունվել է մասամբ:</p>	<p>«ՀՀ պաշտպանության նախարարությանը ինտերնի կրթական ծրագրով լրացուցիչ 35 տեղերի հատկացմանը անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրվելու են 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի 09.04.02 «03. Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում» ծրագրով նախատեսված միջոցների տնտեսումից, որը պայմանավորված է «Հնֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ» առարկաների նախապատրաստական դասընթացների կազմակերպման ստուգարքների հանձման համար և ընդունելությունը սահմանվածից պակաս կատարելու հետևանքով սովորողների միջին տարեկան թվաքանակների նվազմամբ:</p>
<p>Ֆինանսների նախարարություն</p> <p>հունվարի 17-ի թիվ 01/9-2/465-19 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի</p>	<p>Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:</p>	<p>Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:</p>
<p>Արդարադատության նախարարություն</p> <p>հունվարի 17-ի թիվ 01/14/840-19 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>	<p>Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:</p>	<p>Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:</p>
<p>Հանրային քննարկում</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>	<p>Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:</p>	<p>Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:</p>